

ԱՆՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ,
Հայ-Ռուսական համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ

ԽԱՐԴԱԽՈՒԹՅԱՄԲ ԲԺՇԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹ ԻՐԱԿԱՆԱՅՆԵԼՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ապացուցողական բժշկության մեթոդներին չվստահելով կամ շրջանցելով դրանց մատչելիության և հասանելիության հետ կապված խնդիրները՝ մարդիկ երբեմն նախընտրում են դիմել այլընտրանքային բուժմանը, որը երբեմն ոչ այլ ինչ է, քան խարդախություն, որը կատարվում է պացիենտի խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով: Օրենսդրական համապատասխան հիմքերի և վերջիններիս հիման վրա իրականացվող պատշաճ հսկողության պարագայում բնակչության առողջությունը, մարդու կյանքն ու առողջությունը, ինչպես նաև սեփականության իրավունքը կգտնվեն անհրաժեշտ իրավական պաշտպանության տակ:

Հիմնաբառեր- ապացուցողական բժշկություն, շառլատանիզմ, անբավարար ապացուցված միջոցներ/մեթոդներ, պատրանքային մեթոդներ/միջոցներ:

Ապացուցողական բժշկության մեթոդներին չվստահելով կամ շրջանցելով վերջիններիս մատչելիության և հասանելիության հետ կապված խնդիրները՝ մարդիկ երբեմն նախընտրում են դիմել այլընտրանքային բուժման: Սակայն այլընտրանքային բուժման մեթոդները ոչ միշտ են գիտականորեն հիմնավորված, հաճախ էլ դրանք որևէ առնչություն չունեն հիվանդության և ախտահարվածության իրական բուժման հետ: Այս հանգամանքն առաջացնում է իրավիճակ, երբ այլընտրանքային բժշկության անվան տակ իրականացվում են միջամտություններ, կիրառվում են մեթոդներ, որոնց նպատակը բուժօգնության և բուժսպասարկման դիմած հիվանդից խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով գումար վաստակելն է: Նման վարքագիծը ոչ միայն վտանգի տակ է դնում մարդու կյանքն ու առողջությունը, այլև ուղղված է վերջինիս սեփականության իրավունքի դեմ:

նաև այլ ոլորտներում խարդախությունը բնութագրելու համար (օրինակ՝ քաղաքական շառլատանիզմ), սակայն վերջինս անգլո-սաքսոնական և ռոմանո-գերմանական իրավահամակարգերում մեծապես բնորոշում է խարդախությամբ բժշկական գործառույթի իրականացումը: Երկու վարկած կա «շառլատան» եզրույթի ծագումնաբանության հետ կապված: Առաջինի համաձայն՝ «շառլատան» եզրույթը, որն իտալական ծագում ունի, առաջացել է «ciallare» բառից, որը թարգմանաբար նշանակում է «վերամբարձ խոսել, ճոռոմաբանել», իսկ երկրորդ վարկածի համաձայն՝ եզրույթն առաջացել է իտալերեն «cerretano»՝ Cerreto-ի բնակիչ բառից՝ նկատի ունենալով իտալական Cerreto di Spoleto գյուղի բնակիչներին, ովքեր հանրային վայրերում վաճառում էին դեղամիջոցներ:

1. «Շառլատանիզմ» հասկացությունը: Տարբեր երկրներում բուժման պատրվակով խարդախությամբ, այն է՝ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով միջամտությունների իրականացումն անվանվում է շառլատանիզմ: Ըստ Էդուարդ Ադայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ի՝ «շառլատանը միամիտ մարդկանց հավատը՝ վստահությունը չարաշահող խաբեբան է», իսկ շառլատանիզմը՝ նման վարքագիծը: Չնայած հասկացությունը երբեմն օգտագործվում է

2. Պատմական ակնարկ: Շառլատանիզմն առաջին անգամ հիշատակվել է Հիպոկրատի կորպուսի «Սրբազան հիվանդության մասին» (De la maladie sacree) գլխում, որտեղ տարբերակվել են ռացիոնալ բժշկությունն ու կախարդական բժշկությունը: Հեղինակը, կախարդական բժշկության համատեքստում անդրադառնալով էպիլեպսիային նշել է, որ վերջինս կապ չունի «աստվածային տիրապետության» հետ և բնական պատճառներ ունի: Նա գրել է. «Իմ կարծիքով, նրանք, ովքեր առաջինը վերագրեցին այս հիվանդությանը սուրբ բնույթ, մարդիկ էին, որոնք համեմատելի էին այն մարդկանց հետ, ովքեր այսօր մոգեր են, մոլորյալ քահանաներ և շառլատաններ, մարդիկ, ովքեր ցանկա-

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նում են լինել բարեպաշտ և բարձրագույն գիտելիքների տիրապետող»²: Տարբեր ժամանակաշրջաններում հիպոկրատյան տեքստում առանձնացվող ռացիոնալ ու կախարդական բժշկությունները միմյանց կողք կողքի են զարգացել: Օրինակ՝ հին եգիպտական բժշկությունը բաղկացած էր ոչ միայն դեղաբույսերով բուժումից և վիրաբուժությունից (Էբերսի /մ.թ.ա. 1550-ական թթ./ և Էդվին Սմիթի /մ.թ.ա. 1500-ական թթ./ բժշկական պապիրուսներում), այլև մոգությունից, աստղագուշակությունից, հմայքներից, ամուլետներով բուժումից և արտաթորանքներից պատրաստված դեղամիջոցներից³: Շառլատաններին, կախարդներին և նրանց պատժի ձևերին է վերաբերում Գոմինիկյան միաբանության անդամներ, գերմանացի կաթոլիկ աստվածաբաններ Հայնրիխ Կրամերի և Յակոբ Շպրենգերի դիվաբանությանը նվիրված «Վիուկների մուրճ» (Malleus maleficarum) աշխատությունը /1486թ./, որտեղ նշվում է, որ շառլատաններն ու կախարդներն իրենց գործունեության ընթացքում օգտագործում էին քարեր, խոտաբույսեր, ծառեր, կենդանիներ, երգեր և երաժշտական գործիքներ: Երբեմն էլ զարգացող բժշկական ընթացակարգերը պարունակել են գիտական բժշկության մեթոդներ, սակայն վերջիններս օգտագործվել են ոչ նպատակային կերպով: Օրինակ՝ 16-17-րդ դարերում տարածված էր հոգեկան առողջության խնդիր ունեցող անձանց գլխից «խելագարության քարը» հանելու նպատակով զանգի տրեպանացիայի կատարումը: Պատահել է, որ զարգացող բժշկական մեթոդը հիմք է դրել ներկայիս բժշկական նպատակներով կիրառվող մեթոդի: Այսպես, 17-րդ դարում զարգանում էր բժշկության նոր մեթոդ՝ մեամերիզմը, որը մերօրյա հիպնոտիզմի նախատիպն էր: Ըստ մեամերիզմի՝ մոլորակների գրավիտացիոն դաշտերն ազդում են մարդկանց առողջության և նրանց մարմիններում հոսող «անտեսանելի մագնիսական հեղուկի» վրա («կենդանական մագնետիզմ»), և հիվանդություններն առաջանում են հեղուկի համաչափ հոսքի ցանկացած խափանման ժամանակ, և մարդն առողջանում է հեղուկի հոսքի բնականոն ընթացքը վերականգնելուց հետո: Հեղուկի բնականոն հոսքը վերականգնելու համար՝ բազմաթիվ մեթոդներ էին մշակվել: Օրինակ՝ հիստերիայով պացիենտը (թերապիան կիրառվում էր հիմնականում հոգեբուժարտիկ խանգարումներ ունեցող անձանց նկատմամբ) երկաթե շիճուկ էր կուլ տալիս, որից հետո Մեսմերը մագնիսներ էր կցում նրա մարմնի տարբեր մասերին⁴ և կարգավորում էներգիան: Հետագայում, այս թերապիան կիրառելիս, Մեսմերի աշակերտը հայտնաբերեց տարօրինակ քնի տեսակ, որը Մարկիզ դը Պուլսեգուրն (1751-1825թթ.) անվանում է «մագնիսական տոմամբուլիզմ»: Այսօր հիպնոթերապիան իր արդյունավետության որոշակի մակարդակի վերաբերյալ ապացույցների

բացակայության պատճառով համարվում է այլընտրանքային բժշկության տեսակ: Վերոգրյալի դիտարկման արդյունքում տեսնում ենք, որ նախկինում հավատամքի և բժշկության սահմանները հաճախ համընկել են, ինչն ավելի խոցելի էր դարձնում հիվանդին, ով դիմում էր բուժօգնության և բժշկական սպասարկման: Նման իրավիճակներում պացիենտին մնում է ապավինել բուժօգնություն և բժշկական սպասարկում իրականացնողների բախտաբանությանը:

Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա արհմիությունների և կոլեկտիվ խմբավորումների պահանջների ճնշումից ազատվելու նպատակով Ֆրանսիայում 1791 թվականի հունիսի 14-ին ընդունվել էր «Միևնույն արհեստ և մասնագիտություն ունեցող արհեստավորների և աշխատողների միավորումների մասին» օրենքը (Շապլյեի օրենք)⁵, որով արգելվել էր ցանկացած մասնագիտական խմբավորման ստեղծումն ու գոյությունը: Այս համատեքստում էլ, որ 1792 թվականի օգոստոսի 18-ի հրամանագրով՝ վերացվել էին բժշկական համալսարանները և բժշկական մասնագիտության կանոնակարգումը, ինչի հետևանքով յուրաքանչյուր ոք կարողանում էր ազատորեն զբաղվել բժշկությամբ: Այս ժամանակաշրջանում բժշկության անվան տակ տարածվում էր շառլատանիզմը՝ բուժման պատրվակով և վստահությունը չարաշահելու միջոցով խարդախությունները: Նման պայմաններում առաջացել էր բժշկական մասնագիտության վերստեղծման անհրաժեշտությունը: 1803 թվականի մարտի 10-ի օրենքով նախատեսվեց բուժօգնության և բուժապասարկման ոլորտում աշխատողների 2 կատեգորիա՝ «բժիշկներ» (docteurs en médecine) և «առողջապահության աշխատակիցներ» (officiers de santé): Առողջապահության աշխատակիցներն անցումային դեր ունեին և կոչված էին իրականացնելու օժանդակ և հարբժշկական գործունեություն: Արդեն 19-րդ դարի վերջին, երբ քրեականացվեց բժշկական ապօրինի գործունեությունը, առողջապահության աշխատակիցների գործունեությունն արգելվեց⁶: Սակայն ապօրինաբար բժշկությամբ զբաղվելն քրեականացնելու հանգամանքը չնպաստեց շառլատանիզմի պրակտիկայի վերացմանը:

3. Շառլատանիզմի եղանակները: Շառլատանիզմը երկօբյեկտ երևույթ է: Ամմիջական օբյեկտները բնակչության առողջությունը, մարդու կյանքն ու առողջությունն են, իսկ լրացուցիչ օբյեկտը՝ սեփականության իրավունքը: Ամմիջական օբյեկտի պարագայում բժշկական ծառայություն մատուցողը, կիրառելով գիտականորեն արդյունավետությունը և անվտանգությունը չհաստատված միջոցներ/մեթոդներ, ուղղակիորեն վտանգում է մարդու կյանքը կամ առողջությունը: Ինչ վերաբերում է պատրանքային միջոցներին/մեթոդներին, ապա

մարդու կյանքը կամ առողջությունը դիտավորությանը վտանգի տակ է դրվում այն առումով, որ մարդը կորցնում է իրապես բուժում ստանալու ժամանակն ու հնարավորությունը, ինչը կարող է հանգեցնել հիվանդության, համախտանիշի կամ կլինիկական վիճակի բարդությունների, սրման, հիվանդության հետագա ընթացքը կանխելու հնարավորության կորստի, անգործությանը առողջությանը պատճառված վնասի, ընդհուպ՝ մահվան: Ինչ վերաբերում է ոչ անմիջական լրացուցիչ օբյեկտին, ապա տվյալ դեպքում անձը ոչ միայն բուժում չի ստանում կամ մարդու կյանքին/առողջությանը պատճառվում է վնաս, այլև պացիենտն իր վստահությունը շահած անձի կողմից մատուցած «ծառայությունների» համար վճարում է, ինչը տվյալ բուժումն իրականացնող անձի հիմնական նպատակն է:

Հաշվի առնելով բժշկության ոլորտի առանձնահատկությունները՝ շառլատանիզմը կարող է դրսևորվել երկու եղանակով՝ 1) անբավարար ապացուցված միջոցների/մեթոդների կիրառմամբ շառլատանիզմ, 2) պատրանքային միջոցների/մեթոդների կիրառմամբ շառլատանիզմ, երբ թե՛ անբավարար ապացուցված միջոցները/մեթոդները, թե՛ պատրանքային միջոցները/մեթոդները ներկայացվում են որպես արդյունավետ և անվնաս: «Անբավարար ապացուցված միջոցներ/մեթոդներ» հասկացությունն ընդգրկում է հետևյալ երկու դեպքերը. 1) Չեն կատարվել բավարար քանակի և մակարդակի հետազոտություններ պարզելու համար միջոցների արդյունավետությունն ու անվնաս լինելու հանգամանքը, 2) Կատարվել են բավարար քանակի և մակարդակի հետազոտություններ պարզելու համար միջոցների արդյունավետությունն ու անվնաս լինելու հանգամանքը, սակայն հետազոտությունների արդյունքում վերջիններս չեն հաստատվել: Օրինակ՝ արջի յուղը խորհուրդ է տրվում որպես օնկոլոգիական (ուռուցքաբանական) հիվանդությունները կանխելու և բուժելու միջոց¹⁴, սակայն վերջինիս արդյունավետությունը և անվնաս լինելու հանգամանքն օնկոլոգիական հիվանդությունների դեպքում բավարար ապացուցված չէ: Պատրանքային միջոցները/մեթոդները բժշկի կողմից կիրառվող այն միջոցները/մեթոդներն են, որոնք իրականում ակնհայտորեն որևէ դրական կամ բացասական ազդեցություն չեն ունենում առողջության վրա, այլ կապված են միայն ներշնչվողականության հետ: Օրինակ՝ մարդու մոտ առկա է հիվանդություն, որի բուժման համար առաջարկվում է հմայիլներով, ամուլետներով (թախսմաններով) բուժում¹⁵, որը նախնադարյան և հեթանոսական ժամանակաշրջաններում դիվաբանական (դեմոնոլոգիական) բժշկության եղանակներից էր:

Վերոգրյալ եղանակով կատարվող հանցագործությունների առանձնահատկությունն այն է,

որ վստահությունը չարաշահելու հիմնական բաղադրիչը հիվանդի բուժման արդյունքը երաշխավորելն է: Տվյալ պարագայում անհրաժեշտ է քննարկել երկու հանգամանք՝ 1) բուժող անձի կողմից արդյունքի պարտավորության ստանձնումը որպես պացիենտների վստահությունը շահելու եղանակ, 2) խեղված իրազեկված/տեղեկացված համաձայնություն:

Մինչև բուժող անձի կողմից արդյունքի պարտավորության ստանձնումը որպես վստահությունը շահելու եղանակի քննարկում հարկ է անդրադառնալ արդյունքի պարտավորության հասկացությանը՝ միաժամանակ քննարկելով նաև միջոցի պարտավորության հասկացությունը¹⁶: Վերջիններս քաղաքացիական իրավունքում հայտնի սկզբունքներ են, որոնք բժշկական իրավունքում կիրառելիս, լավագույնս են արտացոլում միմյանց միջև տարբերությունը և կիրառման հետևանքները: Արդյունքի պարտավորության դեպքում բուժաշխատողը/բուժող անձը պարտավորվում է հասնել պահանջված/նախանշված արդյունքին, որը պացիենտի բուժումն է (պացիենտի ողջամիտ ակնկալիքը): Միջոցի պարտավորության դեպքում բուժաշխատողը պարտավորվում է բոլոր անհրաժեշտ միջոցները, ռեսուրսները և ջանքերն օգտագործել և կատարել իր պարտավորությունները՝ անկախ վերջնական արդյունքից: Տվյալ դեպքում խոսքը միայն պայմանագրով նախատեսված պարտավորությունների մասին չէ: Յուրաքանչյուր հիվանդության, ախտահարվածության, առողջական այլ խնդրի մասով գոյություն ունեն կլինիկական ուղեցույցներ (արձանագրություններ/պրոտոկոլներ), որոնք մանրամասն նկարագրում են անհրաժեշտ գործողություններն ու քայլերը հերթականությամբ, անհրաժեշտ բուժական մեթոդների և դեղորայքի կիրառումը: Ըստ 1996 թվականի մարտի 4-ին ընդունված «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի¹⁷, կլինիկական ուղեցույցը լիազոր մարմնի հաստատած բժշկական մասնագիտական հասարակական կազմակերպությունների կամ առողջապահական կամ բժշկական կազմակերպությունների՝ ապացուցողական բժշկության սկզբունքների հիման վրա մշակված և բուժաշխատողների համար նախատեսված փաստաթուղթ է, որը ներառում է որոշակի հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարման ժամանակակից բժշկագիտության լավագույն փորձը և բավարարում է առողջության հետ կապված որոշակի խնդիր ունեցող պացիենտների կարիքները, որի նպատակը բուժաշխատողների կողմից կլինիկական որոշակի դեպքի համար որոշում կայացնելուն աջակցելն է: Այսինքն՝ բուժաշխատողի կողմից տվյալ հիվանդության կամ համախտանիշի կամ կլինիկական վիճակի վարման կանոնների պահ-

www.ardaradutyjournal.com

պանունը նշանակում է միջոցի պարտավորության իրականացում: Պացիենտի համար, ում ողջամիտ ակնկալիքը բուժումն է, դժվար է ընդունել, որ չնայած բժշկի կողմից պահպանվել են կլինիկական ուղեցույցների բոլոր կանոնները, սակայն ի վերջո բուժման արդյունքը չի համապատասխանում իր սպասելիքին: Սա է պատճառը, որ չվստահելով ապացուցողական բժշկությանը կամ սպառելով դրանց մեթոդները՝ պացիենտներն ապավինում են այլընտրանքային բժշկությանը: Այս հանգամանքից օգտվելով՝ մասնագետ հանդիսացող անձինք մշակում են կամ կիրառում են այլընտրանքային բուժման սեփական մեթոդները, պացիենտին երաշխավորելով բուժում, այդպիսով շահելով նրանց վստահությունը:

Անդրադառնալով խեղված տեղեկացված/իրազեկված համաձայնությանը՝ անհրաժեշտ է նախ նշել, որ պացիենտի համաձայնությունը համարվում է տեղեկացված, եթե բուժաշխատողի կողմից տրամադրվում է օբյեկտիվ տեղեկատվություն, որը պետք է պարունակի պլանավորված բուժօգնության, բժշկական միջամտության, դրա/դրանց այլընտրանքների բնույթի և հնարավոր հետևանքների հետ, դիտարկվող բուժօգնության/ միջամտության վերաբերյալ համապատասխան փաստերի, նպատակի, բնույթի և հետևանքների և դրա հետ կապված ռիսկերի, յուրաքանչյուր հիվանդի անհատական հատկությունների հետ կապված ցանկացած ռիսկի (տարիքը կամ այլ պարտոլոգիաների առկայությունը) մասին տեղեկություններ: Տվյալ պարագայում, խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով, այլընտրանքային բուժում իրականացնողը, չտրամադրելով օբյեկտիվ տեղեկատվություն և հաճախ միայն վերջնական բուժում երաշխավորելով, իրապես տեղեկացված համաձայնություն չի ստանում պացիենտից և վերջինիս զրկում է նպատակների անհրաժեշտությունն ու օգտակարությունը, միջամտության մեթոդները՝ դրա ռիսկերի և առաջացած անհանգստության կամ ցավի դեմ կշռելու հնարավորությունից:

Այսպիսով, շառլատանիզմին բնորոշ են ծառայությունը մատուցողի կողմից արդյունքի պարտավորության ստանձնումը և պացիենտին լիարժեք ու օբյեկտիվ տեղեկատվության չտրամադրումը, որի պարագայում պացիենտը թեև տալիս է իր համաձայնությունը կատարվելիք բժշկական գործառնություն, սակայն նշված համաձայնությունը բովանդակային առումով չի համապատասխանում ներպետական և միջազգային օրենսդրությամբ պահանջվող իրազեկված/տեղեկացված համաձայնության չափանիշներին, այլ կրում է միայն ձևական բնույթ:

Ուսումնասիրելով լավագույն փորձ ունեցող պետությունների օրենսդրությունը և նախադեպային իրավունքը, անհրաժեշտ է անդրադառնալ

դրանցից ֆրանսիական իրավունքին և ուսումնասիրել շառլատանիզմը որպես իրավախախտում/ հանցագործություն՝ զուգահեռաբար վերլուծություններ կատարելով նաև արարքի որակման հարցերին:

4. Շառլատանիզմի իրավական կարգավորումը Ֆրանսիայում: Շառլատանիզմը Բժշկական դեոնտոլոգիայի կանոնագրքի (Code de déontologie des médecins) 39-րդ հոդվածով սահմանվում է. «Բժշկի կողմից հիվանդին պատրանքային կամ ոչ բավարար ապացուցված միջոցներ առաջարկելը՝ դրանք ներկայացնելով որպես արդյունավետ կամ անվտանգ: Շառլատանիզմի ցանկացած պրակտիկա արգելվում է»¹⁸: Ինչպես տեսնում ենք, Ֆրանսիայի Բժշկական դեոնտոլոգիայի կանոնագիրքը ոչ միայն արգելում է շառլատանիզմի ցանկացած պրակտիկա, այլև այդպիսին է համարում պատրանքային և ոչ բավարար ապացուցված միջոցներ առաջարկելը, այսինքն՝ անձը, ով հիվանդին առաջարկում է վերը նշված միջոցները, խախտում է կանոնագրքային նորմը և կանոնագիրքը տվյալ դեպքում չի կարևորում նման առաջարկի ընդունման հանգամանքը՝ արարքի ավարտման պահի որոշումը թողնելով պատասխանատվություն նախատեսող օրենսգրքերի վրա: Բժշկական դեոնտոլոգիայի կանոնագրքի 39-րդ հոդվածը ներառված է Ֆրանսիայի Հանրապետության Հանրային առողջության օրենսգրքի R. 4127-39 հոդվածում¹⁹: Հանրային առողջության օրենսգրքի R. 4127-39 հոդվածը վերաբերում է բացառապես բժիշկներին (հատուկ սուբյեկտներ), որից հետևում է, որ հոդվածը կիրառելի չէ ցանկացած անձի նկատմամբ: Ֆրանսիայի քրեական օրենսգրքում շառլատանիզմը որպես առանձին հանցակազմ քրեականացված չէ, սակայն որոշակի հանցակազմեր հնարավորություն են տալիս դրա նկատմամբ քրեական պատասխանատվություն սահմանել. օրինակ՝ մեկ ուրիշին դիտավորությամբ վտանգի ենթարկելու (mise en danger délibérée d'autrui), անզգուշությամբ ֆիզիկական ամբողջականությունը վնասելու (atteinte involontaire à l'intégrité physique), չկանխամտածված սպանության (homicide involontaire) հանցակազմերը: Այն դեպքում, երբ շառլատանական գործողություններ են կատարում բժշկությամբ զբաղվող անձինք, չունենալով համապատասխան որակավորում, ապա վերջիններս ենթակա են պատասխանատվության առողջապահական մասնագիտությունների ապօրինի իրականացման համար (օրինակ՝ Հանրային առողջության օրենսգրքի L. 4161-1 հոդվածը վերաբերում է ապօրինի բժշկական գործունեություն իրականացնելուն (exerce illégalement la médecine), L. 4161-2 հոդվածը՝ ապօրինի ատամնաբուժական գործունեություն իրականացնելուն (exerce illégalement l'art dentaire), L. 4161-3 հոդվածը՝ ապօրինի մանկաբարձական

գործունեություն (exerce illégalement la profession de sage-femme) իրականացնելուն):

Անդրադառնալով շառլատանիզմի եղանակներին՝ հարկավոր է նշել, որ դրանք ուղղակիորեն ամրագրված են Բժշկական դեոնտոլոգիայի կանոնագրքի (Code de déontologie des médecins) 39-րդ հոդվածով, որի վերլուծությունից երևում է, որ շառլատանիզմը սովորաբար դրսևորվում է 2 եղանակով՝ հիվանդին պատրանքային կամ ոչ բավարար ապացուցված միջոցներ առաջարկելով՝ դրանք ներկայացնելով որպես արդյունավետ կամ անվտանգ:

Ֆրանսիայի Պետական խորհուրդը (Conseil d'État), 2001 թվականի հոկտեմբերի 19-ի որոշմամբ անդրադառնալով ոչ բավարար ապացուցված միջոցների/մեթոդների կիրառմամբ շառլատանիզմին, որոնք ներկայացվում են որպես արդյունավետ և անվնաս, նշել է, որ պատասխանատվության հարցը լուծելիս իրավասու մարմինը պարտավոր է գնահատել օգտագործված միջոցի ոչ բավարար ապացուցված լինելու հանգամանքը ոչ միայն Ֆրանսիայի, այլև միջազգային տեսանկյունից²⁰ : Տվյալ դեպքում բժիշկն իր հիվանդներին նշանակել էր հիմնականում արտասահմանյան երկրներից ներմուծված, ներքին շուկայավարման թույլտվություն չունեցող այնպիսի դեղամիջոցներ, ինչպիսիք են Ֆրիդմանի պատվաստանյութը²¹, D.P.G.՝ Daphne gnidium-ը²², Bioparyl-ը²³ և Beljanski ապրանքները²⁴, որոնց բաղադրությունը երբեմն նույնիսկ իր համար էր անհայտ, բացի այդ՝ դեղամիջոցները երբեք չէին եղել «Կենսաբժշկական հետազոտություններին մասնակցող անձանց պաշտպանության մասին» 1988 թվականի դեկտեմբերի 20-ի օրենքի²⁵ շրջանակներում կատարված փորձարարական հետազոտությունների առարկա և դրանց արդյունավետությունը և անվտանգությունը հաստատված չէին Ֆրանսիայում: Պետական խորհրդի կողմից ձևավորված դիրքորոշումը կարող է բացատրվել նրանով, որ ապացուցողական բժշկությունն ունի հստակ չափորոշիչներ և բժշկական գործառույթի ընթացքում օգտագործված միջոցների/մեթոդների՝ նախկինում տվյալ պետությունից դուրս ըստ այդ չափանիշների բավարար ապացուցված լինելու հանգամանքը կարող է հիմք ծառայել վեճի լուծման համար:

Ֆրանսիայի Պետական խորհուրդը 2007 թվականի նոյեմբերի 26-ի որոշման²⁶ մեջ քննարկել է անվնաս/անվտանգ պատրանքային միջոց օգտագործելու դեպքում պատասխանատվության հարցը: Տվյալ դեպքում բժիշկը ռևմատիկ հիվանդությանը տառապող իր հիվանդներից մեկին բուժել էր թելի վրա անցկացված ճոճանակը մարմնի վրա սահեցնելով և նախաբազուկին ամպուլա կիրառելով, ինչպես նաև հիվանդին խորհուրդ էր տվել տարբեր գրքեր կարդալ և սոյայի կաթ խմել: Պե-

տական խորհուրդը նշել է, որ չնայած միջոցն անվնաս է եղել, այնուամենայնիվ, միջոցի անվնաս լինելը որևէ հետևանք չի կարող ունենալ բժշկի կողմից թույլ տրված սխալի առկայության վրա: Եթե արարքը փաստացի վնաս չի պատճառել պացիենտին, ապա շառլատանիզմը կարող է որակվել դիտավորյալ ուրիշներին վտանգի ենթարկելու հանցակազմով, այսինքն՝ անձը մահվան կամ առողջական վնաս կրելու անմիջական վտանգի տակ է, որը կարող է հանգեցնել խեղման կամ մշտական հաշմանդամության (Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 223-1 հոդված²⁷): Վտանգը կարող է առաջանալ պատրանքային դեղամիջոցի ընդունման պատճառով հիվանդի կողմից արդյունավետ բժշկական արտադրանքի կիրառումից կամ ապացուցված թերապիայից հրաժարվելու հետևանքով: Այսպիսով, միջոցի/մեթոդի անվտանգությունը բավարար չէ բժշկին պատասխանատվությունից ազատման համար:

Ծառայությունը մատուցած անձի կողմից ծախսած միջոցների, կատարած գործողությունների և մատուցած ծառայությունների մեծածախս լինելը, ինչպես նաև անվճար ծառայություններ մատուցելու հանգամանքը ևս չեն կարող պատասխանատվությունից ազատման հիմք լինել: Օրինակ՝ Ֆրանսիայի Կաբրիեր համայնքում կոսմետոլոգը, չունենալով համապատասխան որակավորում, միաժամանակ «անբարեխիղճ առևտրային գործունեություն» (pratique commerciale trompeuse) և «ստվերային տնտեսություն» (exécution d'un travail dissimulé) է վարել և «չկանխամտածված վնասվածքներ պատճառել» (blessures involontaires) տուժողներին: Առաջին տուժողի դեպքում կոսմետոլոգը՝ «աչքի եզրագծին բոտոքսի ներարկումներ էր կատարել, որից հետո տուժողի մոտ բարդություններ էին առաջացրել՝ դեմքի այտուց, աչքերի չորություն և գլխացավեր»: Երկրորդ տուժողի դեպքում «չուրթերին հիալուրոնաթթվի ներարկում էր կատարել, որը հանգեցրել էր վարակի»: Իր գործունեության ընթացքում կոսմետոլոգը «հատկապես կիրառել է բոտոքսի և հիալուրոնաթթվի ներարկումներ, տեղային անզգայացմամբ պոլիդիոքսանոնային թելերի տեղադրում, ակվալիքսի²⁸ ներարկումներ, ինչպես նաև ջրածնի պերօքսիդով ատամների սպիտակեցում, որը միայն 0,1% կամ դրանից պակաս կոնցենտրացիաներով լուծույթների հետ կիրառման դեպքում է ազատ օգտագործելի, դրանից ավելին միայն ատամնաբույժ-վիրաբույժներն են իրավասու նշանակելու և օգտագործելու այս նյութը»²⁹: Կոսմետոլոգի կողմից տարբեր թանկարժեք կոսմետիկ միջոցների կիրառումը վերջինիս քրեական պատասխանատվությունից ազատման հիմք չի հանդիսացել, ավելին, վերջինս պայմանական ազատազրկման է դատապարտվել և տուգանվել ապօրինի բժշկական գործունեություն իրականաց-

ներու համար:

Բացի բնակչության առողջության, մարդու կյանքի կամ առողջության դեմ ուղղված հանցագործություն լինելուց՝ շառլատանիզմը նաև սեփականության դեմ ուղղված հանցագործություն է: Տվյալ պարագայում՝ հանցավորը, խոստանալով պացիենտի վերջնական բուժում և հավաստիացնելով վերջինիս դրանում, շահում է նրա վստահությունը, մատուցում է ծառայություն և դրա դիմաց ստանում գույքային օգուտ: Հաշվի առնելով, որ շառլատանիզմի հանցակազմը Ֆրանսիայի քրեական օրենսգրքում բացակայում է, իսկ նման հանցագործությունը ենթադրում է թե՛ խարդախություն, թե՛ ապօրինի բժշկական գործունեություն, ուստի հաճախ արարքը որակվում է համակցությամբ: Խարդախությունն ըստ Ֆրանսիայի քրեական օրենսգրքի 313-1-րդ հոդվածի բնութագրվում է որպես «խաբեությամբ և համոզելով ուրիշի գույքն իրենը դարձնելը»: Արարքը համակցությամբ որակելու հարցին անդրադարձել է Ֆրանսիայի վճռաբեկ դատարանը: Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից 2001 թվականի փետրվարի 6-ին որոշում է կայացվել անձին խարդախության և ապօրինի բժշկական գործունեության համար դատապարտելու դատավճիռն օրինական ուժի մեջ թողնելու մասին³⁰: Տվյալ գործում ամբաստանյալը, ներկայանալով որպես «Vitalocéane» ընկերության «բնական բժշկության որակավորված մասնագետ»՝ գովազդային ֆայլեր էր ուղարկել նախապես ընտրված 55-ից բարձր տարիքի անձանց, որտեղ գովազդվում էին 28 խմբաքանակի դեղահաբեր՝ որպես 100% բնական և կենսական սպիտակուցներ պարունակող դեղամիջոցներ՝ պատրաստված կակղամորթների³¹ էքստրակտների³² փոշուց: Գովազդին կցված էր նաև պատասխան-ձևաթուղթը, որը ստանալուն պես աշխատակիցներն այցելում էին հաճախորդներին և նրանց առողջական վիճակը որոշելու համար կատարում «օրգանոմետրի» թեստավորում: Կախված «արդյունքներից»՝ առաջարկվել էր դեղահաբի որոշակի քանակություն, որին համաձայնելով՝ տուժողները վճարել էին մեծ գումարներ: Մեկ այլ գործում՝ Ֆրանսիայի Վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2005 թվականի մայիսի 31-ի որոշմամբ³³ նախկին բժշկին ապօրինի բժշկությամբ զբաղվելու և խարդախության համար դատապարտելու դատավճիռն օրինական ուժի մեջ է թողնվել: 1978 թվականին իր որդու մահվանից, հոգեբանական շոկ ապրելուց և քաղցկեղով հիվանդանալուց հետո՝ նախկին բժիշկը 1984 թվականին մշակել է «քաղցկեղի երկաթի օրենք»-ի տեսությունը, որի համաձայն՝ քաղցկեղը հոգեբանական շոկի կամ մեկուսացված վիճակում տարած սուր տրավմայի հետևանք է, որը դրսևորվում է գլխուղեղի որոշակի հատվածում համակարգչային շերտագրության միջոցով հայտնաբերելի ուռուցքի օջախի

տեսքով և, հետևաբար, կարող է բուժվել հիվանդների հետ հարցազույցների և կորտիզոնի³⁴ կիրառման միջոցով, ինչն էլ իրականացնում էր իր պացիենտների նկատմամբ: Այսպիսով ֆրանսիական իրավունքն ընդունելի է համարում շառլատանիզմը որակել թե միայն ապօրինի բժշկությամբ զբաղվելու, թե ապօրինի բժշկությամբ զբաղվելու և խարդախության հանցակազմերի համակցությամբ:

5. Խարդախությամբ բժշկական գործառույթ իրականացնելու համար պատասխանատվությունը Հայաստանի Հանրապետությունում: Ինչպես մի շարք պետությունների օրենսդրություններում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ «շառլատանիզմի» առանձին հանցակազմ չի նախատեսվում: Սակայն վերոնշյալը չի բացառում բժշկական ոլորտում շառլատանական արարքի համար վրա հասնող պատասխանատվությունը: Այն դեպքում, երբ շառլատանական գործունեություն իրականացնելը հետևանքներ չի առաջացնում, ապա արարքը կարող է որակվել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 47-րդ հոդվածով (ապօրինաբար բժշկությամբ զբաղվելը), որը սահմանում է. «Բժշկական պատշաճ կրթություն չունեցող և սահմանված կարգով բժշկական գործունեության չթույլատրված անձի կողմից որպես արհեստ բժշկությամբ զբաղվելն առաջացնում է տուգանքի նշանակում սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով»:

Ինչ վերաբերում է քրեական պատասխանատվությանը, ապա 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված և 2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 41-րդ գլխում (Բնակչության առողջության դեմ ուղղված այլ հանցագործություններ) տեղ գտած 407-րդ հոդվածով նախատեսվում է բժշկական օգնություն և սպասարկում ապօրինի իրականացնելու համար քրեական պատասխանատվություն՝ միայն համապատասխան հետևանքների առկայության դեպքում /նյութական հանցակազմ/: ՀՀ ՔՕ 407-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Ապացուցողական բժշկության սկզբունքների վրա չհիմնված գործողությամբ կամ համապատասխան բժշկական օգնության և սպասարկման տեսակն իրականացնելու համար մասնագիտական գիտելիքների կամ տեխնոլոգիաների շրջանցմամբ բժշկական գործառույթ իրականացնելը, եթե դա անգոյություն միջին կամ թեթև ծանրության վնաս է պատճառել մարդու առողջությանը պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասունապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝

մեկից չորս տարի ժամկետով»:

Հանցակազմի վերլուծությունից երևում է, որ վերջինիս օբյեկտիվ կողմը կազմող արարքը երկրնորելի է, այսինքն՝ հանցանքի կատարումը կարող է դրսևորվել՝

1) ապացուցողական բժշկության սկզբունքների վրա չհիմնված գործողությամբ բժշկական գործառույթ իրականացնելը,

2) համապատասխան բժշկական օգնության և սպասարկման տեսակն իրականացնելու համար մասնագիտական գիտելիքների կամ տեխնոլոգիաների շրջանցմամբ բժշկական գործառույթ իրականացնելը:

Օբյեկտիվ կողմի հետևանքները կարող են դրսևորվել՝

1) մարդու առողջությանը թեթև ծանրության վնաս պատճառելով (ՀՀ ՔՕ 407-րդ հոդվածի 2-րդ մաս),

2) մարդու առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով (ՀՀ ՔՕ 407-րդ հոդվածի 2-րդ մաս),

3) մարդու առողջությանը ծանր վնաս պատճառելով (ՀՀ ՔՕ 407-րդ հոդվածի 3-րդ մաս),

4) այլ ծանր հետևանք առաջացնելով (ՀՀ ՔՕ 407-րդ հոդվածի 3-րդ մաս),

5/ մարդու մահ առաջացնելով (ՀՀ ՔՕ 407-րդ հոդվածի 3-րդ մաս):

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 61-րդ կետի համաձայն՝ «ապացուցողական բժշկությունը բժշկական օգնության և սպասարկման ընթացքում կիրառվող մոտեցում է, որի կանխարգելիչ, ախտորոշիչ և բուժական միջոցների օգտագործման վերաբերյալ որոշումներն ընդունվում են՝ ելնելով դրանց արդյունավետության և անվտանգության վերաբերյալ առկա ապացույցներից, որոնք ի շահ պացիենտի օգտագործելու համար ենթակա են որոնման, համեմատման, ամփոփման և լայնորեն տարածման»: Համապատասխան բժշկական օգնության և սպասարկման տեսակն իրականացնելու համար մասնագիտական գիտելիքների կամ տեխնոլոգիաների շրջանցմամբ բժշկական գործառույթ իրականացնելու հասկացության տակ պետք է հասկանալ այն դեպքերը, երբ բժշկական գործառույթն իրականացվում է շրջանցելով այն մասնագիտական գիտելիքները և տեխնոլոգիաները, որոնք համապատասխան բժշկական օգնության և սպասարկման տեսակն իրականացնելու հիմք են:

Ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ Հայաստանում շառլատանական գործողությունները կարող են որակվել խարդախության և բժշկական օգնություն և սպասարկում ապօրինի իրականացնելու հանցակազմերի համակցությամբ, քանի դեռ որպես հիմնական հանցակազմի՝ բժշկական օգնու-

թյուն և սպասարկում ապօրինի իրականացնելու հանցակազմի ծանրացնող հանգամանք մյուս հանցակազմը՝ խարդախությունը սահմանված չէ: ՀՀ ՔՕ 53-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «հանցագործությունների համակցություն է համարվում միևնույն անձի կողմից մեկ կամ մեկից ավելի արարքներով ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարելը, եթե նա դրանցից ոչ մեկի համար քրեական պատասխանատվության չի ենթարկվել»:

ՀՀ ՔՕ 255-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խարդախությունը բնութագրվում է որպես խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով հափշտակություն: Անձի արարքը խարդախությամբ ապօրինի բժշկությամբ զբաղվել որակելու համար անհրաժեշտ է, որ վերջինս գիտակցի, որ իր մատուցած բուժօգնությունը և բուժապասարկումն արդյունավետ և անվտանգ չէ, սակայն պացիենտի վստահությունը չարաշահելու եղանակով և խաբեությամբ իրականացնի այն:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկվում է, որ ՀՀ ՔՕ-ում որպես 407-րդ հոդվածի 2-րդ մասի ծանրացնող հանգամանք նախատեսել նույն արարքը խարդախությամբ կատարելը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ապացուցողական բժշկության սկզբունքների վրա չհիմնված գործողությամբ կամ համապատասխան բժշկական օգնության և սպասարկման տեսակն իրականացնելու համար մասնագիտական գիտելիքների կամ տեխնոլոգիաների շրջանցմամբ բժշկական գործառույթ իրականացնելու հանցագործությունն ուղղված է ոչ միայն բնակչության առողջության, մարդու կյանքի և առողջության, այլև սեփականության դեմ: Բացի այդ՝ առաջարկվում է միևնույն հանցակազմում որպես հետևանք նախատեսել այն հանգամանքը, որ ապացուցողական բժշկության սկզբունքների վրա չհիմնված գործողությամբ կամ համապատասխան բժշկական օգնության և սպասարկման տեսակն իրականացնելու համար մասնագիտական գիտելիքների կամ տեխնոլոգիաների շրջանցմամբ բժշկական գործառույթ իրականացնելու հետևանքով հնարավոր չի եղել կանխել հիվանդության հետագա ընթացքը կամ բարդությունների առաջացումը, հաշվի առնելով, որ ծառայություն մատուցողը գիտակցում է, որ վերջինս արդյունավետ չէ, սակայն, այնուամենայնիվ, մատուցում է ծառայությունը՝ այդ կերպ զրկելով պացիենտին ժամանակին արդյունավետ բուժօգնություն և բուժապասարկում ստանալու հնարավորից, ինչի հետևանքով հնարավոր է հետագայում չհաջողվի կանխել հիվանդության հետագա ընթացքը կամ բարդությունների առաջացումը:

www.aradaradatumjournal.com

¹ Տե՛ս, <https://www.cnrtl.fr/lexicographie/Charlatan/0>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023թ.:

² Տե՛ս, J.Jouanna, C.Magdelaine, Hippocrate, L'Art de la médecine, Paris, GF Flammarion, 1999, էջեր 35-36:

³ Մարդկային ծագում ունեցող դեղամիջոցներից Հին Հռոմում գլադիատորի արյունն էր օգտագործվում որպես էպիլեպսիայի դեմ դեղամիջոց:

⁴ Տե՛ս, <https://www.magicgatebg.com/Books/MalleusAcrobat.pdf>, վերջին այցելությունը՝ 23.03.2023:

⁵ Տրեսանացիա, կրանիոէկտոմիա, զանգահատում - զանգի վրա վիրաբուժական բացվածքներ անել:

⁶ Տե՛ս, V.Jordi, Great Masters of Western Art, Watson-Guptill, 2002, էջ 71:

⁷ Կոչվել է հիմնադրի՝ գերմանացի բժիշկ Ֆրանց Ֆրիդրիխ Անտոն Մեսների անունով:

⁸ Ուսմունք հիպոնոսի երևույթների մասին:

⁹ Շուտով Մեսները հայտնաբերում է, որ կարողանում է հասնել նույն արդյունքին միայն իր ձեռքերով պացիենտներին դիպելու եղանակով, առանց ավելորդ երկաթե շիճուկի կամ մագնիսների օգտագործման:

¹⁰ Տե՛ս, Loi relative aux assemblées d'ouvriers et artisans de même état et profession, La loi Le Chapelier, http://hgsem-pai.fr/doc_clic/fra_nouvelle/data/loiChapelier.pdf, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:

¹¹ Տե՛ս, Décret relatif à la suppression des congrégations séculières et des confréries, 18 août 1792, http://rhe.ish-lyon.cnrs.fr/fichiers_pdf/toformation/17920818.pdf, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:

¹² Տե՛ս, B.Hoerni, “La loi du 30 novembre 1892”, Histoire des sciences médicales, Tome XXXII, n°1, pages 63-67, <https://www.biusante.parisdescartes.fr/sfhm/hsm/HSMx1998x032x001/HSMx1998x032x001x0063.pdf>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:

¹³ Օրինակ՝ քաղցկեղի բուժումը հնարավոր է հիվանդության սկզբնական փուլերում (տե՛ս <https://nih.am/am/news/14>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023), տվյալ ժամանակահատվածը բաց թողնելու և համապատասխան բուժում չստանալու դեպքում կարող են անդառնալի հետևանքներ առաջանալ:

¹⁴ Տե՛ս, [https://tltaudit.ru/hy/medicinal-plants/medvezhii-zhir-lechebnye-svoistva-i-](https://tltaudit.ru/hy/medicinal-plants/medvezhii-zhir-lechebnye-svoistva-i-primenenie-medvezhii-zhir-lechebnye-svoistva-i/), վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023: Վերջինս ազատ վաճառքում է՝ <https://www.list.am/category?q=%D5%A1%D6%80%D5%BB%D5%AB+%D5%B5%D5%B8%D6%82%D5%B2>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:

¹⁵ Տե՛ս, https://www.amulettes.fr/contents/fr/d5567659_Amulettes_pour_la_Sant%C3%A9- Talismans_contre_la_maladie.html, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:

¹⁶ Բժշկության ոլորտում արդյունքի և միջոցի պարտավորություններն առաջին անգամ քննարկվել են Ֆրանսիայի վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի կողմից Մեդսիեի վերաբերյալ 1936 թվականի մայիսի 20-ի որոշման մեջ (Cour de cassation, Chambre civile, 20 mai 1936, arrêt Mercier):

¹⁷ Կլինիկական ուղեցույցի հասկացությունը սահմանող կետն ավելացվել է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին 2020 թվականի մայիսի 6-ին ընդունված թիվ ՀՕ-268-Ն ՀՀ օրենքով:

¹⁸ Տե՛ս, <https://www.conseil-national.medecin.fr/code-deontologie/devoirs-patients-art-32-55/article-39-charlatanisme>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:

¹⁹ Տե՛ս, https://www.legifrance.gouv.fr/codes/section_lc/LEGITEXT000006072665/LEGISCTA000006190547/, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:

²⁰ Տե՛ս, Conseil d'État, 19 octobre 2001 (n° 210590), <https://www.legifrance.gouv.fr/ceta/id/CETATEXT000008016841>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:

²¹ Ֆրիդմանի պատվաստանյութ (vaccin de Friedman) - ակտիվ մոլեկուլը մեկուսացված է ծովային կրիայից, օգտագործվել է սուրբեռկուլոզի դեմ: Տե՛ս <https://www.rts.ch/archives/radio/divers/emission-sans-nom/13347854-le-vaccin-friedmann-imposture-ou-injustice-01-01-1953.html>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:

²² Յողունների երկայնքով բաշխված կարմիր հասապտուղներ ունեցող աֆրիկյան թունավոր թուփ, որի մեջ հայտնաբերված և մշակված DPG-ն դեղամիջոց է, որն օգտագործվում է էյկեմիայի և հեպատիտ B-ի այլընտրանքային բուժման մեջ: Տե՛ս <https://medecine-integree.com/daphne-gnidium/>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:

²³ Gingko biloba ծառի աշնանային տերևների վրա մշակված դեղանյութ, որն օգտագործվում է ֆիբրոզի դեմ: Տե՛ս <http://beljanski-publications.com/publications/Mirko%20Pub%20127%20Skin%20Fibrosis.pdf>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:

²⁴ Միրկո Բելյանսկին ֆրանսիացի կենսաբան է, ով աշխատել է քաղցկեղի և ՉԻԱՀ-ի դեմ «բնական» ծագման միջոցների հայտնաբերման համար: Նշված միջոցները չունենին ապացուցված արդյունավետություն: Գատապարտվել է ապօրինի դեղագործության, դեղամիջոցներն արտադրելու և տարածելու համար: Գեղանյութերը պատրաստելիս օգտվել է այնպիսի թունավոր բույսերից, ինչպիսիք են rauwolfia vomitoria-ն և բրազիլական Pao pereira ծառի կեղևը: Տե՛ս <https://www.mskcc.org/cancer-care/integrative-medicine/herbs/pao-pereira>, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:

²⁵ Տե՛ս, Loi n° 88-1138 du 20 décembre 1988 relative à la protection des personnes qui se prétent à des recherches bio-médicales:

²⁶ Տե՛ս, Conseil d'État, 4ème sous-section, 26/11/2007, 292250, <https://www.legifrance.gouv.fr/ceta/id/CETA->

TEXT000018007668/, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:

²⁷ Տե՛ս, https://www.legifrance.gouv.fr/codes/article_lc/LEGIARTI000024042637, վերջին այցելությունը կայք՝ 23.03.2023:

²⁸ Տե՛ս, Վիրաբուժական ներծծվող թելեր:

²⁹ Տե՛ս, Ավվալիքսը նորարարական լիպոլիտիկ է: Լիպոլիտոթերապիան իրականացվում է մաշկի տակ ներարկման պատրաստուկներով՝ լիպոլիտիկներով՝ ուղղված ճարպային բջիջները կազմաքանդելուն:

³⁰ Տե՛ս, <https://www.tflinfo.fr/justice-faits-divers/elle-injectait-illegalement-du-botox-une-estheticienne-condamnee-pour-blessures-involontaires-2242836.html>, վերջին այցելությունը՝ 23.03.2023:

³¹ Տե՛ս, Cour de Cassation, Chambre criminelle, du 6 février 2001, N° de pourvoi 00-83.425, <https://www.legifrance.gouv.fr/juri/id/JURITEXT000007587537>, վերջին այցելությունը՝ 23.03.2023:

³² Կակղամորթներ – անողնաշարավոր կենդանիների երկրորդ կարգը, որ ունի երեք դաս՝ գլխոտանիների, փորոտանիների և խեցիների (կենդր.):

³³ Էքստրակտ - հանուկ՝ որևէ բանի հյութի խտացումով ստացվող բուժական պատրաստուկ (բժշկ.):

³⁴ Տե՛ս, Cour de Cassation, Chambre criminelle, du 31 mai 2005, N° de pourvoi 04-85.341, <https://www.legifrance.gouv.fr/juri/id/JURITEXT000007639208>, վերջին այցելությունը՝ 23.03.2023:

³⁵ Կորտիզոն, ստերոիդ հորմոն, որն սթրեսի ժամանակ մակերիկամների կողմից արտադրվող հիմնական հորմոններից մեկն է? Կորտիզոնի ներարկումն արվում է կարճաժամկետ ցավազրկման նպատակով, այն նվազեցնում է հոդերի, կապանների, ձուսապարկերի այտուցը: Մաշկաբաններն օգտագործում են կորտիզոնը սպիների, էկզեմայի, ատոպիկ մաշկաբորբի բուժման և սարկոիդոզի զարգացման դադարեցման նպատակով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. J.Jouanna, C.Magdelaine, Hippocrate, L'Art de la médecine, Paris, GF Flammarion, 1999.
2. V.Jordi, Great Masters of Western Art, Watson-Guptill, 2002.
3. B.Hoerni, “La loi du 30 novembre 1892”, Histoire des sciences médicales, Tome XXXII, n°1.
4. Conseil d’État, 4ème sous-section, 26/11/2007 (n° 292250).
5. Conseil d’État, 19 octobre 2001 (n° 210590).
6. Loi relative aux assemblées d’ouvriers et artisans de même état et profession, La loi Le Chapelier.
7. Loi n° 88-1138 du 20 décembre 1988 relative à la protection des personnes qui se prêtent à des recherches biomédicales.
8. Décret relatif à la suppression des congrégations séculières et des confréries, 18 août 1792.
9. Cour de Cassation, Chambre criminelle, du 6 février 2001, N° de pourvoi 00-83.425.
10. Cour de Cassation, Chambre criminelle, du 31 mai 2005, N° de pourvoi 04-85.341.
11. <https://nih.am>
12. <https://tltaudit.ru>
13. <https://www.amulettes.fr>
14. <http://hgsempai.fr>
15. <http://rhe.ish-lyon.cnrs.fr>
16. <https://www.biusante.parisdescartes.fr>
17. <https://www.conseil-national.medecin.fr>
18. <https://www.legifrance.gouv.fr>
19. <https://www.rts.ch>
20. <https://medecine-integree.com>
21. <http://beljanski-publications.com>
22. <https://www.mskcc.org>
23. <https://www.tflinfo.fr>

Աննա Խաչատրյան

Следователь следственного отдела административного района Малатия-Себастья следственного управления города Еревана Следственного комитета РА, аспирант кафедры теории права и конституционного права института права и политики Армяно-Российского университета

РЕЗЮМЕ

Правовые вопросы мошеннического выполнения медицинских функций в республиках Армения и Франция

Не доверяя методам доказательной медицины или обходя проблемы, связанные с их наличием и доступностью, люди иногда предпочитают обращаться к альтернативным методам лечения, которые иногда являются не чем иным, как мошенничеством, осуществляемым путем злоупотребления доверием пациента или обмана. В случае надлежащего контроля, осуществляемого на основании соответствующих правовых оснований, здоровье населения, жизнь и здоровье человека, а также право собственности будут находиться под необходимой правовой защитой.

Ключевые слова: доказательная медицина, шарлатанство, недостаточно проверенные средства/методы, иллюзорные методы/средства.

Anna Khachatryan

Investigator of the Investigative section of the Malatia-Sebastia Administrative District of the Investigative Department of the Yerevan City of the Investigative Committee of the Republic of Armenia, PhD student of the Department of Theory of Law and Constitutional Law of the Institute of Law and Politics of the Armenian-Russian University

SUMMARY

The legal issues of fraudulently performing a medical function in the republics of Armenia and France

Distrusting evidence-based medicine methods or bypassing the problems associated with their availability and access, people sometimes prefer to turn to alternative treatments, which are sometimes nothing more than fraud, carried out by abusing the patient's trust and deception. In the case of proper control carried out on the basis of relevant legal bases, the health of the population, the life and health of the person, as well as the right to property will be under the necessary legal protection.

Key words: evidence-based medicine, charlatanism, insufficiently proven means/methods, illusory methods/means.

Բնագիրը ներկայացվել է 24.03.2023թ.

Ընդունվել է տպագրության 19.05.2023թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է)

իրավաբանական գիտությունների դոկտոր Ա. Ղամբարյանը